Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

409

1903

2(075)
U-15

2010

3058

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа.

1903. № 1103.

Ա. ՏԱՐԻ

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Հատուածայն ծրագրի Հոգևոր իշխանութեան

Թ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Կազմեց

Սահակ քհն. Սահակեանց

2001

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Թոմբինեանցի

1903

21079
U-15

С арт-к 3058

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа.

2(075) Ц-15

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Ա. ՏԱՐԻ

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Համաճայն ծրագրի հոգեւոր իշխանութեան

Թ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց

Սահակ քհ. Սահակեանց

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1903

ՀԱՅԿՈՆԴԱՐ
ՀՍՍՌ-ԱրմССР
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան գրադարան
36117-66

Дозволено цензурою. Тифлисъ, 25 Февраля 1903 года.

50251-ա

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարքի Նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Ըստ քարոզու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Դիւանս թոյլատրէ տպագրութեան դասագրոյս եւ վաւերացուցանէ ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի:

Ի 1-ն Յուլիսի 1899 ամի ի Ս. Էջմիածին:

Դիւանապետ Կորիւն վարդապետ.

Ա Զ Դ

Ծխական դպրոցների ձեւափոխութիւնից ետոյ՝ նրա ծրագիրն էլ փոփոխութեան ենթարկուեց, այս պատճառով եւս բնական է, որ դասագրերն էլ ըստ այնմ յարմարուին։ Մեր ձեռնարկներ գործածողները կնկատեն, որ սոյն տպագրութիւնը յարմարեցրած է վերջին փոփոխութեան՝ որով եւ դիւրութիւն տուած հայր կրօնուսոյցներին՝ լրացնելով մի քանի ձեւականութիւններ։

Երբեմն պատահել է մեզ լսել ոմանց կրօնուսոյցներից, թէ ինչու նրանց համար ոչինչ չկայ աշակերտաց դասագրի մէջ։ Մեր պատասխանն է—մենք դիտմամբ չենք հետեւում դասագիրք կազմողների այն ուղղութեան, որոնք ուսուցչի եւ աշակերտների սասը միասին՝ միեւնոյն դասագրի մէջ են տպագրել տալիս, այլ որոշ հիմունքներով՝ համաձայն մանկավարժական պահանջների, զատած ենք միշտ ուսուցչի բաժինը աշակերտականից եւ դա շատ բնական է—ուսուցչին ասելիքը միտք չունի, վնասակար է մանուկ աշակերտի ձեռը տալը, դա հակամանկավարժական է։

Որովհետեւ այս դասագիրը գործ է տրւում զանազան կարգի դպրոցներում, ուր կրօնի դասերի թիւը տարբեր է, այս պատճառով եւս ըստ ներման ժամանակի եւ հանգամանաց, տուած նիւթը հայր կրօնուսոյցները կարող են լրիւ կամ կրճատ անցնել։

Յարմարեցնելով հին ծրագիրը ներկայ պահանջներին, յոյս ունիմ թեթեւութիւն եւ դիւրութիւն տուած լինիմ կրօնուսոյց եղբարց։

Տփխիս
24-ն յունիսի 1899 թ.

Ա.

1. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն։

2. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՝ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՝ զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Մեր Հայր, որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի, ինչպէս երկնքումը, նոյնպէս էլ երկրի վրայ. մեր ամենօրեայ հացը տուր մեզ այսօր. մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապանե-

ին ենք թողնում. մի ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ փրկիր մեզ չարիցը, որովհետև զօրութիւնը և փառքը քոնն է յաւիտեանս. ամէն։

---

3. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ

Ամենաբարի Աստուած, առաքեա՛ առ մեզ զչնորհս Հոգւոյդ Սրբոյ, զի պարգևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէսզի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զարգասցուք քեզ՝ ստեղծողիդ մերում 'ի փառս, 'ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց։

Ամենաբարի Աստուած, ուղարկիր մեզ Սուրբ Հոգուդ չնորհը, որ մեզ միտք պարգևէ. զօրացնէ մեր հոգու կարողութիւնները՝ որպէսզի ուսում ստանանք. մեծանանք Ստեղծողիդ փառքի համար՝ մեր ծնողներին մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու։

4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԵՏՈՑ

Գոհանամք զքէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ չնորհաց քոց՝ ընդունե-

լութեան ուսմանս։ Օրհնեա՛ զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ի գիտութիւն բարութեան և տո՛ւր մեզ կարողութիւն ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

Շնորհակալ ենք քեզնից, Արարիչ Աստուած, որ արժանացրիր մեզ ուսումն ստանալու։ Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ դէպի բարին. տուր մեզ ոյժ և կարողութիւն այս ուսումը շարունակելու։

5. ԱՂՕԹՔ ՀԱՅԻՑ ԱՌԱՋ

Աչք ամենեցուն ի քեզ, Տէր, յուսան,
Եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու.
Բանաս զձեռն քո
Եւ լցուցանես զամենեսեան
Քաղցրութեամբ կամովք քովք։

Ամենքի աչքն էլ քեզ են նայում, ով Աստուած. դու տալիս ես նրանց կերակուր իւր ժամանակին. բաց ես անում ձեռդ և լիացնում ամենքին քո ողորմութիւնով։

6. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԵՏՈՅ

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց, տացուք գոհութիւն տեառն Աստուծոյ մերոյ՝ Հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Զլիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ նմա փառք յաւիտեանս. ամէն։

Ո՛վ տէր Յիսուս, լիացանք քո բարիքներով. շնորհակալութիւն անենք մեր տէր Աստծուն—Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն։ Մեզ կերակրող և լիացնող Քրիստոս Աստուածը թող անպակաս անէ այս սեղանի լիութիւնը. յաւիտեանս փառք լինի նրան։ Ամէն։

---

7. ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի քո Աստուածածին.
Եւ աղաչեմք զանարատ զկոյդ,
Բարեխօսեա՛ զՄիածին որդիդ
Փրկել զմեզ ի փորձութենէ
Եւ յամենայն վտանգից մերոց։

Քո առաջն ենք ընկնում, Աստուածածին և աղաչում ենք քեզ, ով անարատ կոյս, բարեխօսիր մեզ համար Միածին որդուդ, որ ազատէ մեզ փորձութիւնից և վտանգներից։

---

8. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ թագաւորն և զԿայսրն Ռուսաց զՆիկոլայ Ալէքսանդրովիչն։ Զօրացո զնա. օգնեա զաւակաց և զօրաց նորա՝ պահելով զամենեսին ի խաղաղութեան։

Տէր Աստուած, կեանք տուր ամենայն Ռուսաց ամենաբարեպաշտ Թագաւորին ու Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին։ Զօրացրու Նրան. օգնիր Նրա զաւակներին, զօրքին և ամենքին խաղաղութեան մէջ պահպանիր։

Բ.

9. ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ

1. Ես եմ տէր Աստուած քո:	Քո տէր Աստուածը ես եմ:
2. Մի՛ արասցես կուռս:	Կուռք չշինես:
3. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց:	Աստծու անունը զուր տեղը մի յիշիր:
4. Յիշեսջի՛ր զօր շաբաթու՝ սրբել զնա:	Շաբաթ օրը սուրբ պահիր:
5. Պատուեա զհայր քո և զմայր:	Քո հօրն ու մօրը պատուիր:
6. Մի՛ սպանաներ:	Ոչ որի չսպանես:
7. Մի՛ շնար:	Ընութիւն չանես:
8. Մի՛ գողանար:	Գողութիւն չանես:
9. Մի՛ սուտ վկայեր:	Սուտ վկայութիւն չտաս:
10. Մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայնի զինչ ընկերի քո իցէ:	Աչք մի ունենար ոչ քո ընկերոջ տանը և ոչ նրա ունեցածին:

10. ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից:

Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս. Որդին Աստուծոյ, ծընեալն Աստուծոյ՝ հօրէ միածին, այսինքն էութենէ Հօր:

Աստուած՝ Աստուծոյ, լոյս՝ ի լուսոյ. Աստուած ճշմարիտ Աստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած, նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև երկինս և ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մեր

Հաւատում ենք որ կայ մի Աստուած. որ նա ամենակալ Հայր է. երկնքի ու երկրի՝ երևելիների և անտեսանելիների ստեղծողն է:

Հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոսը մեր միակ տէրն է, որ նա Հայր Աստծու միածին որդին է, այսինքն նրա էութիւնից է:

Հաւատում ենք որ նա Աստուած է՝ Աստծուց. լոյս է՝ լուսից. ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստծուց՝ ծնած և ոչ թէ ստեղծուած: Հաւատում ենք, որ նա նոյն Հայր Աստծու բնութիւնից է, որով ամեն բան եղաւ երկնքում և երկրիս վրայ՝ թէ երևելիները և թէ անտեսանելիները:

Հաւատում ենք, որ մարդկանց փրկութեան

րոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ. ծընաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Զարշարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոցէ նովին մարմնով և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ հոգի՝ տանողն և իկատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և ընակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի միայն ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

համար իջաւ երկնից. մարմին առաւ. մարդ դարձաւ և ծնաւ կատարեալ կերպով՝ Սուրբ Հոգւով՝ Սուրբ կոյս Մարիամից։ Հաւատում ենք, որ Սուրբ Հոգւով առաւ մարմին, հոգի, միտք և այն ամենն՝ ինչ որ կայ մարդու մէջ՝ ճշմարիտ կերպով և ոչ թէ կարծեօք։

Հաւատում ենք, որ նա չարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ. նոյն մարմնով երկինք համբարձաւ ու նստաւ Հօր աջ կողմը։

Հաւատում ենք, որ նա պէտք է դայ նոյն մարմնով և Հօր փառքով՝ կենդանիներին ու մեռածներին դատելու և որի թագաւորութիւնը անվերջ կլինի։

Հաւատում ենք նաև Սուրբ Հոգուն, որ նա ոչ որից չէ ստեղծուել. կատարեալ Աստուած է, որ խօսեց օրէնքի, մարգարէների և աւետարանների միջոցով, որ Յորդանան գետն իջաւ, քարոզեց Աստծուց ուղարկուած Քրիստոսի մասին և բնակուեց սրբերի մէջ։

Հաւատում ենք նաև մի ընդհանրական և առաքելական եկեղեցու. մի մկրտութեան, ապաշխարութեան, մեղաց քաւութեան, մեռելների յարութեան, հոգիների և մարմինների վերջին դատաստան լինելուն, երկնքի արքայութեանը և յաւիտենական կեանքին։

9.

11. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՅՈՒԻԼԸ

Քանանացւոց երկրում մի քաղաք կար՝ անունը Նազարէթ։ Այդ քաղաքում ապրում էր մի բարեպաշտ մարդ Յովակիմ անունով՝ իւր Աննա կնոջ հետ։ Սրանք որդի չունէին, դրա համար էլ շատ էին տխրում և Աստծուն ամեն օր աղօթում էին, որ իրանց մի զաւակ պարգևէ։ Մի անգամ էլ աղօթելիս խոստացան, որ եթէ Աստուած իրանց խնդիրը լսէ և մի որդի պարգևէ, Աստծուն կընծայեն։ Աստուած լսեց բարեպաշտ ծնողների աղօթքը և մի աղջիկ պարգևեց նրանց, որի անունը Մարիամ դրին։ Երբ աղջիկը երեք տարեկան դարձաւ, Յովակիմն ու Աննան, ինչպէս խոստացել էին, նրան տաճար տարան և ընծայեցին Աստծուն։ Մարիամը մնաց տաճարում. քահանայապետը նրա ուսուցիչն էր, սովորեցնում էր նրան, թէ Աս-

տծուն ինչպէս պէտք է ծառայել։ Մարիամը մնաց տաճարում մինչև 14 տարեկան դառնալը։ Նա այնտեղ պարապում էր աղօթքով և սուրբ գիրք կարդալով։

Մի քանի ժամանակից ետոյ քահանաները Մարիամին յանձնեցին իւր աղգական Նազարէթցի ծերունի Յովսէփին, որի մօտ և ապրում էր։ Յովսէփն արհեստով հիւսն էր։

Սուրբ կոյս Մարիամի ծննդեան տօնը կատարում ենք սեպտեմբերի 8-ին, իսկ տաճարին ընծայուիլը՝ նոյեմբերի 21-ին։

12. ԱԻԵՏՈՒՄՆ

Մի անգամ երբ Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ հրեշտակը երևաց նրան և ասաց. «Ուրախացի՛ր, Մարիամ, Աստուած քեզ հետ է»։ Երբ Մարիամը հրեշտակին տեսաւ, վախեցաւ ու մտածում էր, ի՞նչու համար է հրեշտակն իւր մօտ գալիս և ողջունում։ Հրեշտակն ասաց. «Մի՛ վախիր, Մարիամ, Աստուած քեզ շատ է սիրում. դու մի որդի կունենաս և նրա անունը

Յիսուս կդնես. նա Աստծու որդի կկոչուի և բոլոր մարդկանց փրկիչը կլինի։

Մարիամը չհակառակեց։ Նա խոնարհ պատասխանեց և ասաց. «Ես Աստծու աղախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող այնպէս էլ կատարուի»։ Սրանից ետոյ հրեշտակը հեռացաւ Մարիամից։

Գաբրիել հրեշտակի Մարիամ կուսին աւետիք տալը՝ տօնում ենք ապրիլ ամսի եօթին։ Այդ տօնի անունն է Աւետումն։

13. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հին ժամանակ, երբ թագաւորներն ուզում էին իմանալ, թէ իրանց երկրի մէջ քանի մարդ կայ, հրամայում էին, որ ամէն մարդ գնայ իւր հայրենի քաղաքը և ապա սկսում էին համարել։ Այդպիսի մի հրաման դուրս եկաւ հէնց այն ժամանակներում, երբ Յիսուս Քրիստոսը պիտի ծնուէր։

Յիսուսի ծնողները—Յովսէփն ու Մարիամը կենում էին Նազարէթ քաղաքում։

Բայց որովհետև Յովսէփը Բեթղէհէմցի էր, այդ պատճառով վերկացաւ և շտապով եկաւ իւր հայրենի քաղաքը։ Յովսէփն աղքատ էր. քաղաքի մէջ չկարողացաւ տուն վարձել, դրա համար վեր եկաւ քաղաքից դուրս մի այրի մէջ, ուր հովիւները վատ եղանակին իրանց ոչխարներն էին բերում։

Այդ գիշեր Յիսուս ծնաւ։ Ծնողները բարուրի մէջ փաթաթեցին և մսրի մէջ դրին։

Բեթղէհէմը մեր երկրի նման ցուրտ չէ, այնտեղ տաք է—ձմեռը դրսում կարելի է քնել։ Այն երկրի հովիւները ամառ ձմեռ իրանց ոչխարները դուրսն են պահում, միայն անձրևային եղանակին այրն են բերում։

Երբ Յիսուս ծնաւ, ոչ ոք չգիտէր—հովիւներն դաշտումն էին և իրենց ոչխարներն էին արածացնում։ Յանկարծ օդի մէջ հրեշտակ երևաց։ Այս բանից հովիւները վախեցան։ Հրեշտակն ասաց. «Մի՛ վախենաք, ես ձեզ և բոլոր մարդկանց մեծ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
36117-66
ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ

ուրախութիւն եմ յայտնում—ձեզ համար Բեթղէհէմում փրկիչ է ծնել. նա այրումն է. խանձարուրով պատած և մսրի մէջ դրած»: Այս խօսքերից ետոյ՝ յանկարծ մի խումբ հրեշտակներ երևացին, որոնք երգում էին և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»—փառք Աստծուն երկնքումը, այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն կլինի:

Այնուհետև հրեշտակները հեռացան: Հովիւներն ասացին մէկ մէկու. «Գնանք Բեթղէհէմ և տեսնենք այս ինչ բան է, որ Աստուած ցոյց տուաւ մեզ»: Նրանք շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մանկանը խանձարուրով փաթաթած ու մսրի մէջ դրած: Երբ տեսան, փառք տուին Աստծուն և ամեն պատահողի ասում էին, որ փրկիչը ծնուել է:

Յիսուսի ծնունդը կատարում ենք յունուարի 6-ին:

ՁՄԵՌԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Մեծ և զարմանալի խորհուրդ է, որ այսօր յայտնուեց—հովիւները հրեշտակների հետ երգում են և աշխարհին աչքալոյս տալիս:

Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղէհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Նոր թագաւոր ծնաւ Բեթղէհէմ քաղաքում, մարդկանց որդիք, օրհնեցէք, որովհետև նա մեզ համար ծնաւ:

14. ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՃԱՐ

Հրէաների մէջ սովորութիւն էր, որ անդրանիկ արու զաւակ ունեցողները՝ քառասներորդ օրը գնում էին Երուսաղէմի տաճարը. մանկանը նուիրում էին Աստծուն. զոհ էին անում և ետ գնում: Հա-

ղուստ ծնողները զոհում էին մի գառը, իսկ աղքատները՝ մի զույգ աղաւնի կամ տատրակ։

Յիսուսի ծննդեան քառասներորդ օրը ծնողները տարան նրան Երուսաղէմի տաճարը և որովհետև նրանք աղքատ էին, հետները վերցրին մի զույգ աղաւնի։

Այդ ժամանակ Երուսաղէմում կենում էր մի ծերունի՝ Սիմէօն անունով։ Սուրբ Հոգին սրան իրաւունք էր տուել կենդանի մնալ՝ մինչև Քրիստոսի աշխարհ գալը։ Երբ Յիսուսին տաճար բերին, Սիմէօն ծերունին իմացաւ. դուրս եկաւ նրա առաջ. փառք տուաւ Աստծուն և ասաց. «Տէր Աստուած, այժմ ա՛ռ իմ հոգին, որովհետև ես տեսայ Փրկչին, որին սպասում էի»։ Յովսէփն և Մարիամը զարմանում էին այս խօսքերի վրայ։

Տաճարում մի կին էլ կար՝ Աննա անունով, սա մարգարէուհի էր։ Աննան ևս փառաբանում էր Աստծուն և ամենին

պատմում էր, որ Յիսուս խոստացեալ Փրկիչն է։

Այս տօնը կատարում ենք փետրուարի 14-ին. տօնի անունն է—Տեառնընդառաջ։

15. ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍ ԳՆՈՒՄ Է ՏԱՃԱՐ։

Հրէաները մեզ նման ամեն քաղաքում կամ գիւղում եկեղեցիներ չունէին, ամբողջ երկրի մէջ մի հատ տաճար կար, այն էլ Երուսաղէմ քաղաքումն էր։ Դրա համար ամեն տարի անթիւ ուխտաւորներ էին գալիս, մանաւանդ Զատկի տօնին։ Ուխտաւորներն այնքան շատ էին լինում՝ որ քաղաքի մէջն այլ ևս տեղ չէր լինում —քաղաքից դուրս լեռների վրայ վրաններ էին խփում։ Տօնը եօթն օր էր տևում։

Յիսուսի ծնողներն էլ Զատկի տօնին ամեն տարի ուխտ էին գնում։ Երբ Յիսուս սասն երկու տարեկան դարձաւ, նրան էլ հետները տարան։ Այս առաջին ան-

դամն էր, որ Յիսուս գնում էր Աստծու տունն աղօթելու։

Տօնի օրերն անցան։ Ծնողները կամենում էին Նազարէթ դառնալ, բայց յանկարծ տեսան, որ Յիսուս մանուկն այլ ևս չկայ։ Քաղաքի մէջ երկար փնտռեցին, բայց իզո՛ւր։ Կարծում էին թէ ծանօթների հետ Նազարէթ դարձած կլինի, դրա համար մի օրուայ ճանապարհ եկան. գտան իրանց ծանօթներին. հարցու փորձ արին, տեսան որ չկայ։ Նորից ետ դարձան Երուսաղէմ։ Մի օր էլ այստեղ փնտռեցին և հազիւ երրորդ օրը տաճարում գտան։

Յիսուս այստեղ վիճաբանում էր վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին։ Ամենքն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ։

Ծնողներն այս որ տեսան, շատ ուրախացան։ Մայրն ասաց. «Որդեա՛կ, այդ ինչ բերիր մեր գլխին—այս երեք օր է,

որ ես և հայրդ քեզ ենք փնտռում»։ Յիսուս պատասխանեց. «Մի՞թէ չգիտէիր, որ ես իմ Հօր տանը կլինեմ»։ Սրանից ետոյ Յիսուս ծնողների հետ Նազարէթ դարձաւ, հնազանդ էր և լսում էր նրանց խօսքին։

Փոքրիկ մանուկներ, դուք էլ Յիսուսի նման պիտի սիրէք Աստծու տունը և հնազանդ լինէք ձեր ծնողներին։

16. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափերում մի իմաստուն մարդ էր բնակւում՝ Յովհաննէս անունով։ Նա մարգարէ էր—մարդիկ ամեն կողմից սրա մօտ էին գալիս. խորհուրդ էին հարցնում և խոստովանում էին իրանց մեղքերը։ Ով իւր սխալները խոստանում էր չկրկնել, Յովհաննէսը նրան մկրտում էր Յորդանան գետի մէջ։ Սրանով Յովհաննէսն ուզում էր ասել, ինչպէս որ ես ձեր մարմինը մաքրում եմ, այնպէս էլ դուք ձեր սրտերը պիտի մաքրէք։

Յիսուս ևս եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու։ Նա արդէն 30 տարեկան էր։ Դեռ չէր մօտեցել Յիսուս, Յովհաննէսը հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանգնողներին. «Ահա՛ գալիս է Աստծու գառը, սա պէտք է մարդկանց աղատէ իրանց մեղքերից»։

Յիսուս մօտեցաւ Յովհաննէսին և յայտնեց, որ կամենում է նրանից մկրտուել։ Յովհաննէսը մերժեց և ասաց. «Ես պէտք է քեզնից մկրտուեմ, դո՞ւ ես ինձ մօտ գալիս»։ Յիսուս պատասխանեց. «Մկրտի՛ր ինձ, որովհետև դու տարիքով ինձնից մեծ ես»։ Սրանից ետոյ Յովհաննէսը չհակառակեց և մկրտեց Յիսուսին Յորդանան գետի մէջ։

Երբ Յիսուս մկրտուեց և ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց. Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ. երկինքը բացուեցաւ և ձայն եկաւ,

որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, դրան լսեցէ՛ք»։ Շատ քիչ մարդիկ գիտէին, որ Յիսուս Աստծու որդին էր, բայց այժմ պարզ կերպով տեսան և հաւատացին, որ Քրիստոս Աստծու որդին է։ Դրա համար էլ մկրտութեան օրը՝ մարդիկ իրար շնորհաւորում են և ասում. «Շնորհաւոր յայտնութիւն»։

Յիսուսի մկրտութեան տօնն ամենայն տարի կատարում ենք յունուարի 6-ին։

16. ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Յիսուս իւր մկրտութիւնից ետոյ սկսեց շրջել երկրի մէջ և ամեն տեղ քարոզում էր ու բժշկում—կոյրերին աչք էր տալիս. կաղերին ոտք. խուլերին՝ լսողութիւն և մեռելներին՝ յարութիւն։ Ով տխուր էր, մխիթարում էր. հարուստներին ասում էր, որ իրանց ունեցածից աղքատներին էլ բաժին հանեն։ Վատ մարդկանց խրա-

տում էր, որ լաւանան, ապա թէ ոչ Աստուած կպատժէ։ Այսպէս Յիսուս օր ու գիշեր հանգիստ չունէր, շրջում էր ամեն տեղ և քարոզում էր մարդկանց, որ վատ բաներից հեռանան և լաւ բաներ անեն։ Յիսուս այնպէս սիրուն քարոզում էր, որ լսողները հաց ուտելն անգամ մոռանում էին։ Բայց այս բանը դուր չէր գալիս նրա թշնամի քահանաներին և փարիսեցիներին, որոնց մօտ ժողովուրդն այլ ևս չէր գնում քարոզ լսելու, այս պատճառով էլ թշնամացան Քրիստոսի հետ։ Յիսուս ինչ որ խօսքով քարոզում էր, նոյնը գործով էլ ցոյց էր տալիս։

Այսպէս՝ մի անգամ Յիսուս քարոզելով եկաւ իւր ծանօթ Ղազարոսի մօտ, որ կենում էր Բեթանիա գիւղում՝ Երուսաղէմին մօտիկ։ Այս Ղազարոսը երկու քոյր ունէր. մինի անունը Մարիամ էր, իսկ

միւսինը՝ Մարթա։ Երկու քոյրերն էլ Յիսուսին շատ էին յարգում։ Երբ իմացան, որ Յիսուս հիւր է եկել, է՛լ չգիտէին թէ ինչպէս պատիւ տան նրան։ Մարիամը նստեց Յիսուսի մօտ և ուշադրութեամբ լսում էր նրա քարոզները։ Յիսուսի խօսքերն այն աստիճան դուր եկան Մարիամին, որ նա ամենայն ինչ մոռացաւ։ Իսկ Մարթան մեծ պատրաստութեան մէջ էր —աշխատում էր, որքան կարելի է, լաւ կերակուրներ պատրաստել Յիսուսի համար։

Մարթան երբ տեսաւ, որ Մարիամը չի գալիս իրան օգնելու, դարձաւ Յիսուսին և ասաց. «Տէ՛ր, չե՞ս տեսնում, որ քոյրս ինձ մենակ է թողել, ասա՛, որ գայ և ինձ օգնէ»։ Յիսուս պատասխանեց. «Մարթա՛, Մարթա՛, դու շատ բաներով ես զբաղւում, քիչն էլ բաւական է։ Դու կարող ես քո քոյր Մարիամից օրինակ վերցնել, նա աւելի լաւ ձևով է պատւում

ինձ, նա լսում է իմ քարոզները—ով ինձ ուզում է յարգել, թո՛ղ իմ խօսքերը լսէ։

Դրանով Յիսուս ուզում է ասել, որ Մարիամի նման լսող, իսկ Մարթայի պէս աշխատասէր լինենք։

18. ՅՈՒԴԱ

Յիսուս ունէր 12 աշակերտ. նրանք կոչւում են առաքեալներ։ Սրանցից մինը, որի անունը Յուդա էր, լաւ մարդ չէր, փող շատ էր սիրում։ Մի անգամ սա ծածուկ գնաց Յիսուսի թշնամիների մօտ և ասաց. «Ինձ ի՞նչ կտաք, որ Յիսուսին ձեզ մատնեմ»։ Նրանք էլ երեսուն արծաթ փող խոստացան։

Զատկի տօնը մօտեցել էր։ Յիսուս տեսաւ, որ Յուդան պիտի մատնէ և իւր մահը մօտենում է, ուզեց մի անգամ էլ իւր բոլոր աշակերտների հետ միասին Զատկի ընթրիքն ուտել և էլի մի անգամ ցոյց տալ, թէ որքան սիրում է նրանց։

19. ՈՏՆԱԼՈՒԱՑ

Աւագ հինգշաբթի օրը Յիսուս ասաց իւր աշակերտներին, որ մի վերնատան մէջ ընթրիք պատրաստեն։ Աշակերտներն էլ այնպէս արին, ինչպէս որ Յիսուս ասաց։ Երեկոյեան Յիսուս տասն և երկու աշակերտների հետ սեղան նստաւ և ասաց. «Սրտով ցանկացայ այս ընթրիքը ձեզ հետ ուտել՝ մահից առաջ»։ Այս ասելուց ետոյ՝ Յիսուս ընթրիքից վեր կացաւ, հանեց վերևի շորերը, մէջքին մի սրբիչ կապեց. ջուրն ածեց կոնքի (աւազանի) մէջ և սկսաւ աշակերտների ոտները լուանալ և սրբել։ Ոտները լուանալուց ետոյ՝ ընթրիքի նստաւ և տխուր ձայնով ասաց իւր աշակերտներին. «Ձեզանից մինն այս գիշեր ինձ պիտի մատնէ»։ Այս նրա համար ասաց, որ կարելի է իրան մատնող աշակերտն զգուշանայ, բայց ի զուր։ Յուդան այնպէս էր ցոյց տալիս իրան, որպէս թէ ինքը չէ մատնողը և ոչինչ չգիտէ։

Աշակերտներն այս խօսքերի վրայ տրտմեցան և միմեանց էին նայում. չգիտէին թէ ում համար է ասում: Ամեն մէկը տեղից վեր էր կենում և հարցնում. «Տէ՛ր. մի՞թէ ես եմ»: Յուդան էլ հարցրեց. «Մի՞թէ ես եմ, վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Դու ես ասում, ետոյ աւելացրեց. «գնա՛, ինչ որ անելու ես, շուտով արա՛»: Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնը գիտէ Յիսուս, ամօթից է՛լ չկարողացաւ մնալ այնտեղ, վերկացաւ և գնաց Յիսուսի թշնամիների մօտ: Արդէն երեկոյ էր — մթնել էր:

Աւագ հինգշաբթի օրը քահանան եկեղեցում կատարում է ոտնալուայի կարգը և կարագ իւղ է բաժանում:

ՈՏՆԱԼՈՒԱՅԻ ՀԱՐԱԿԱՆ

Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի թողութիւն մեղաց մերոց:

Մկրտութեան աւազանն այսօր հաստատուեցաւ մեր մեղքերի թողութեան համար:

Այսօր Տէրն մեր լուանայը դոտս աշակերտաց և պատուիրէր դայս ասելով:

Այսօր մեր տէր Յիսուս լուանում էր իւր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր.

Մի ոմն 'ի ձէնջ, ասէ, եղբարք, մատնելոց է զիս 'ի մահ և որոշի յաշակերտացդ»:

«Ձեզանից մէկը, եղբայրներ, ինձ մահուան պիտի մատնէ և հեռանայ աշակերտներից»:

20. ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Երբ Յուդան դուրս գնաց, Յիսուս ասաց. «Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ, դուք իրար այնպէս պիտի սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի — սրանով ձեզ կճանաչեն, որ դուք իմ աշակերտներն էք»:

Բացի սրանից Յիսուս կամեցաւ մի ուրիշ յիշատակ էլ թողնել, որ երբ ինքն այլ ևս երկրի վրայ չի լինի, իրան միշտ յիշեն: Ուստի ընթրիքից ետոյ առաւ բաղարջ հաց. օրհնեց. կտրեց. աշակերտներին բաժանեց և ասաց. «Առէ՛ք կե-

ըէ՛ք, այս է իմ մարմինը»։ Եւ ոչ մանրուր գինին առաւ. գոհացաւ. տուաւ նրանց և ասաց. «Խմեցէ՛ք դրանից ամենքդ, սա իմ արիւնն է—ամեն անգամ երբ խմէք այս բաժակից, լիշեցէ՛ք ինձ»։

Մենք էլ այժմ տօն օրերին սուրբ պատարագ ենք մատուցանում. գնում ենք եկեղեցի. քահանային խոստովանում ենք և պատարագից ետոյ ընդունում սուրբ հաղորդը բաղարջ հացի և անապակ գինու օրինակով։ Սա միևնոյնն է, ինչ որ Յիսուս վերնատանը կատարեց։

Պատարագին շատ երգեր են երգում, բայց նրանցից մի քանիսը միայն կասենք։

Ամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր։

Ամեն բանի մէջ օրհնուած ես, Տէր, օրհնում ենք քեզ (որովհետև մեզ համար շատ բարութիւն ես արել), գովում ենք քեզ (որովհետև դու չարչարուեցար և մեզ համար խաղաղութիւն բերիր), գոհանում ենք քեզնից, աղաչում ենք քեզ, մեր տէր Աստուած։

Միայն Սուրբ. Միայն Տէր. Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ հօր. ամեն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

21. ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Հացն օրհնելուց ետոյ՝ Յիսուս իւր աշակերտների հետ դուրս եկաւ Երուսաղէմից և բարձրացաւ Ձիթենեաց լեառը։ Այստեղ Յիսուս ասաց աշակերտներին. «Ինձ պիտի բռնեն, իսկ դուք ամենդ էլ կվախենաք, կթողնէք ինձ և կփախչէք»։ Աշակերտներն ամենն էլ միաբերան ասացին. «Մենք կմեռնենք՝ բայց քեզ չենք թողնի մենակ և չենք փախչի»։

Ձիթենեաց լերան կողքին մի պարտէզ կար՝ Գեթսեմանի անունով։ Յիսուս այստեղ եկաւ և ասաց իւր աշակերտներին. «Նստեցէ՛ք այստեղ. աղօթեցէ՛ք. արթուն կացէք. չքնէք, որ փորձութեան մէջ չընկնէք, իսկ ինքը մի փոքր առաջ

գնաց, երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօթում. «Հա՛յր, եթէ կարելի է այս չարչարանքը (բաժակը) հեռացրու ինձնից, բայց եթէ չես կամենայ, քո կամքն է»։ Յիսուս աղօթքից դարձաւ և տեսաւ, որ աշակերտները քնել են, նորից ասաց. «Արթուն կացէք և աղօթեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք»։ Այս ասաց և դարձեալ գնաց աղօթելու և նոյն խօսքերն էր կրկնում և օգնութիւն խնդրում հօրից։ Յիսուս դարձաւ և աշակերտներին է՛լի քնած գտաւ ու ասաց. «Քանի՞ քնէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ պիտի մատնէ, վեր կացէք գնանք, ահա՛ գալիս է նա»։

22. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Այս խօսքերից ետոյ Յուդան բազմաթիւ զինուորներով ներս մտաւ պարտէզ՝ սրերով և լապտերներով։ Եկողները Յիսուսին չէին ճանաչում։ Յուդան նշան էր

տուել, թէ ումը որ համբուրեմ՝ նրան բռնեցէք»։ Մատնիչը մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց. «Բարև, վարդապետ»։ Յիսուս պատասխանեց. «Յուդա՛, համբուրելով ես մատնում ինձ»։ Այն ժամանակ մօտեցան Յիսուսին, բռնեցին և կապեցին, իսկ աշակերտները թողին և փախան։

23. ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌԱՋ

Զինուորները Յիսուսին կապած տարան քահանայապետի մօտ։ Այստեղ ժողոված էին Քրիստոսի թշնամիները, որ նրա համար մահու պատիժ նշանակեն։ Քրիստոս, ի հարկէ արդար էր. նա Աստուած էր. բացի լաւութիւնից ոչ մէկին վատութիւն չէր արել, բայց նրա թշնամիներն ուզում էին, որ մեղաւոր դուրս բերեն, որպէսզի կարողանան սպանել, դրա համար սուտ վկաներ պատրաստեցին, որոնք հաս-

տատում էին, թէ Յիսուս Աստծուն հայ-
հոյել է, այնպիսի մարդուն սպանում էին։
Այստեղ թքեցին Յիսուսի երեսին. բռունց-
քով ծեծեցին, ծաղրեցին և մինչև լու-
սանալը չարչարեցին։

24. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՀԸ

Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնու-
թիւնով Յիսուսի համար մահու պատիժ
նշանակեցին, խիղճը տանջեց իրան. վեր
առաւ երեսուն արծաթը. ետ տուաւ քա-
հանայապետներին և ասաց. «Ես սխա-
լուեցի, անմեղ արիւն մատնեցի»։ Նրանք
էլ պատասխանեցին, թէ մե՛զ ինչ, դո՛ւ
գիտես, ինչ ուզում ես արա՛»։ Այն ժա-
մանակ Յուդան փողը դէն ձգեց և գնաց
խեղդուեց, որովհետև քանի լիշում էր Յի-
սուսի արած լաւութիւնները և իւր վա-
տութիւնը, չգիտէր թէ ինչ անէր, քուն
չունէր, հանգստութիւն չունէր։

25. ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Հինգշաբթի գիշեր հրէաները Յիսուսի
համար մահուան վճիռ նշանակեցին, իսկ
ուրբաթ առաւօտը վաղ՝ կապած տարան
Պիղատոս դատաւորի մօտ, որ իրանց վճի-
ռը հաստատէ, որովհետև հրէաները իրա-
ւունք չունէին մահու վճիռ տալու—երկ-
րի մէջ ամենամեծ դատաւորը Պիղատոսն
էր, որին կայսրն էր նշանակել։

Պիղատոսը դուրս եկաւ նրանց մօտ և
ասաց. «Ի՞նչ դանդատ ունիք այս մարդու
դէմ»։ Նրանք պատասխանեցին. «Սա ժո-
ղովրդին մոլորեցնում է, ասում է կայսեր
հարկ մի՛ տաք և իրան թագաւոր է ա-
նուանում». Այս որ լսեց Պիղատոսը՝ Յի-
սուսին ներս տարաւ սենեակը, քննեց և
տեսաւ, որ բոլորն էլ սուտ է—նախանձ-
ում են, որ Յիսուս իրանցից լաւ է քա-
րոզում և իրանց սխալները բռնում է։
Պիղատոսը դուրս բերաւ Յիսուսին և յայտ-

նեց ժողովրդին, որ նա արդար է։

Քահանայապետները և ժողովուրդը սկսեցին աղաղակել և ասել. «Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, մենք կայսեր գանգատ կանենք»։ Պիղատոսը վախեցաւ այս բանից—մէկ որ կայսրից վախենում էր և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար մեծամեծ մարդկանց նեղացնել, ուստի վեր առաւ ջուր, ձեռները լուաց և ասաց. «Ես Յիսուսին մեղաւոր չեմ գտնում. դուք գիտէք, տարէք և խաչեցէ՛ք»։ Այս բանի վրայ ժողովուրդը սկսեց միաբերան աղաղակել և ասել. «Թո՛ղ դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի»։

26. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Երբ Յիսուսին խաչելու հրամանն առան հրէաները, ուրբաթ առաւօտ զինուորները վեր առան նրան և տարան, որ խաչեն։ Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը. նա շատ էր յոգնել, որովհետև ամբողջ հինգշաբթի գիշերը չէր քնել, ուստի ճանապարհին վայր ընկաւ խաչափայտի տակ։

Երուսաղէմի մօտ մի բլուր կար՝ անունը Գողգոթա։ Որոշեցին որ Յիսուսին այնտեղ խաչեն։

Երբ Գողգոթա հասան, Յիսուսի ձեռները և ոտները խաչի վրայ մեխեցին—խաչեցին։ Պիղատոսը խաչի վերևում մի տախտակ կպցնել տուաւ և նրա վրայ գրել տուաւ, թէ Յիսուսի յանցանքն ինչ է և թէ նրան ինչու են պատժում։ Տախտակի վրայ գրուած էր—«Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»։ Յիսուսի հետ երկու աւազակ էլ խաչեցին, մինը նրա աջ կողմում, իսկ միւսը՝ ձախ։

Թէև թշնամիները նախանձից խաչել տուին, բայց Յիսուս էլի աղօթում էր նրանց համար և խնդրում էր հայր Աստծուն, որ ներէ նրանց սխալը։ Զինուորները և հրէա-

ները ծաղրում էին Յիսուսին և ասում էին. «Եթէ դու Աստուած ես. եթէ դու հրէաների թագաւորն ես, ի՞նչու չես ազատում քեզ»։

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած մայրը և Յովհաննէս աշակերտը։ Յիսուս ցաւում էր մօր վրայ, ուստի Յովհաննէսին յանձնեց, որ պահէ իւր մօրը։ Այն օրից սկսած՝ Մարիամը Յովհաննէսի մօտն էր։

Ժամը տասներկուսին երկրի վրայ խաւար իջաւ։ Ժամը երեքին՝ ճաշից ետոյ Յիսուս ասաց. «Ծարաւ եմ»։ Զինուորներից մինը խղճաց նրան. սպունգը քացախի մէջ թաթախեց և Յիսուսի շրթունքին մօտեցրեց, որ ճաշակէ և ցաւը մեղմէ, որովհետև այդ խմելիքը փոքր ինչ թմրեցնում է։

Սրանից ետոյ Յիսուս բարձր ձայնով ասաց. «Հա՛յր, հոգիս քեզ եմ յանձնում»։ Այս ասաց և հոգին աւանդեց։

Այդ միջոցին երկիրը շարժուեց, ժայռերը պատռուեցան և շատ գերեզմաններից արդար մարդիկ յարութիւն առան։ Այս որ տեսան, ամենքը լաց էին լինում և ասում էին. «Ուղիղ որ Յիսուս Աստծու որդի է, մենք նրան ի զուր խաչեցինք»։

ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք եւ զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք եւ զսուրբ թաղումդ քո փառաւորեմք։

Քրիստոս, քո խաչին երկրպագութիւն ենք տալիս և քո սուրբ խաչելութիւնը մեծացնում ենք (յարգում ենք), իսկ քո սուրբ թաղումը փառաւորում ենք։

Եկայք հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ծառն խաչին իւրոյ շնորհեաց զպարգեւս աշխարհի։

Եկնք, ով հաւատացեալներ, երկրպագութիւն տանք մեր Քրիստոս Աստծուն, որովհետև նա եկաւ և իւր խաչովն աշխարհիս պարգևներ շնորհեց։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։

27. ԹԱՂՈՒՄՆ

Ուրբաթ երեկոյ Յիսուս մեռաւ։ Միսւ օրը՝ շաբաթ էր և հրէաների զատիկն էր— եթէ Յիսուսին խաչի վրայ տեսնէին, հանգիստ սրտով հաց չէին ուտի, դրա համար էլ գնացին Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ իրաւունք տայ Յիսուսի մարմինը խաչի վրայից վերցնելու։ Պիղատոսը երբ իմացաւ, որ Յիսուս մեռել է, իրաւունք տուաւ։

Զինուորներից մինը կամեցաւ ճիշտ իմանալ Յիսուսի մահը, վեր առաւ գեղարդը, ծակեց կողը, որտեղից արիւն և ջուր բղխեց։

Սրանից ետոյ մի իշխան մարդ՝ անունը Յովսէփ, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, Պիղատոսից խնդրեց, որ Յիսուսի մարմինն իրան տան։ Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկոդիմոս անունով, եկաւ և բերաւ անուշահոտ խնկեր։ Սրանցով օծեցին Յիսուսի մարմինը, կտաւով պատեցին և թաղեցին։

Այնտեղ, ուր Յիսուսին թաղեցին, մի պարտէզ կար, պարտէզումն էլ մի նոր

փորած գերեզման։ Ահա՛ այստեղ դրին Յիսուսի մարմինը՝ մի մեծ քար էլ գլորեցին դրանն ու գնացին։

28. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՆԸ

Շաբաթ օրը հրէաները ոչ մի բանի ձեռք չեն տալիս, սրա համար էլ այդ օրը ոչ ոք չգնաց Յիսուսի գերեզմանը տեսնելու։ Բայց երբ շաբաթն անցաւ՝ կիւրակէ առաւօտը վաղ, դեռ արևը դուրս չէր եկել՝ Մարիամ Մագթաղենացին և ուրիշ կանայք զանազան անուշահոտ խնկեր պատրաստեցին և եկան, որ Քրիստոսի մարմինն օծեն։

Կանայք ճանապարհին ասում էին միմեանց. «Ո՞վ կգլորէ գերեզմանի բերանի մեծ քարը»։ Բայց երբ մօտեցան, տեսան, որ քարը դէն էր ձգած գերեզմանի բերանից։ Կանանցից մինը վազեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւսները գերեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ հրեշտակ նստած է գե-

ըեղմանի աջ կողմում սպիտակ շորերով։ Կանայքը վախեցան։ Հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախենաք, գիտեմ դուք խաչուած Յիսուսին էք որոնում, բայց ի՞նչու էք կենդանին մեռելների մէջ փնտռում։ Նա այստեղ չէ, յարութիւն առաւ։ Գնացէ՛ք, ասացէ՛ք նրա աշակերտներին, որ Յիսուս նրանցից առաջ կգնայ Գալիլիա, դուք այնտեղ կգտնէք նրան, ինչպէս որ ինքն առաջուց ասել է»։

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք եւ զսուրբ թաղումդ քո մեծացուցանեմք եւ զսուրբ յարութիւնդ քո փառաւորեմք։

Փառք սուրբ խաչիդ, ալէլուիա,
Սրբոյ թաղմանդ, ալէլուիա,
Սուրբ յարութեանդ, ալէլուիա։

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս. ամէն։

Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ. (իւր) մահով յաղթեց մահուան, իսկ յարութիւնով մեզ կեանք պարգեւեց, նրան փառք լինի յաւիտեանս. ամէն։

29. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից ետ Յիսուս 40 օր էլի մնաց երկրիս վրայ — նա երբեմն գալիս էր իւր աշակերտների մօտ։ Սրանից ետ Յիսուս Ձիթենեաց լեռը բարձրացաւ, այնտեղ խրատեց նրանց և ասաւ. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք մինչև Հայր Աստուած ձեզ աւետիք կուղարկէ — Սուրբ հոգին երկնքից ձեզ վրայ կիջնի, դուք իսկոյն զօրութիւն կստանաք՝ ուրիշ մարդիկ կդառնաք, ետոյ կերթաք, կքարոզէք Երուսաղէմում, Հրէաստանում, միւս երկիրներում և ամեն տեղ կվկայէք իմ մասին։ Ուրեմն գնացէք և բոլոր ազգերին սովորեցրէք Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։ Սովորեցրէք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ որ ձեզ ասացի։ Ով ձեզ կհաւատայ և կմկրտուի, կազատուի, իսկ ով չի հաւատայ, կպատժուի»։ Երբ այս ասաւ, բարձրացրաւ ձեռները և

օրհնեց նրանց։ Օրհնելու ժամանակ՝ մի ամպ եկաւ և ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս չտեսան Յիսուսին։ Նա երկինք բարձրացաւ։ Նրանք երկրպագեցին ու մեծ ուրախութիւնով ետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճարում օրհնում էին ու սպասում Սուրբ Հոգուն։

Համբարձման տօնը կատարում ենք Զատկից 40 օր ետոյ։

30. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Համբարձումից ետ առաքեալները դարձան Երուսաղէմ և միասին էին։ Տասն օրից ետ երկնքից յանկարծակի մի ձայն լսուեց՝ սաստիկ փչող քամու նման և լցրաւ տունը, ուր նստած էին։ Ետոյ առանձին-առանձին կրակի նման լեզուներ երևացին. այդ լեզուներից ամեն մինը իջաւ իւրաքանչիւրի վրայ։ Իսկոյն Սուրբ Հոգուով լցուեցան և սկսան զանազան լեզուներով խօսել։

Բացի Երուսաղէմացիներից այնտեղ գտնուում էին շատ աստուածավախ հրէաներ, որոնք ուխտ էին եկել աշխարհիս ամեն կողմերից։ Երբ երկնքից իջնող ձայնը լսուեց, ժողովուրդը մի տեղ հաւաքուեց — ամենքը զարմացած լսում էին, թէ առաքեալներն ինչպէս ուրիշ-ուրիշ լեզուներով էին խօսում։ Ոչ ոք չէր հաւատում իւր տեսածին, սրա համար էլ մինը միւսին հարցնում էր. «Չէ՞ որ այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են, տեսէք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը — այս ի՞նչպէս է լինի»։ Իսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում. «Երևի սրանք հարբած են»։

Այն ժամանակ Պետրոս առաքեալը տեղից վեր կացաւ և սկսաւ այսպէս խօսել. «Ո՛վ հրէաստանցիներ և Երուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէ՛ք ինչ որ ձեզ քարոզելու եմ, սրանք հարբած չեն, ինչպէս կարծում էք, որովհետև դեռ ա-

դաւօտեան ժամի 8-ն է։ Լսեցէք, ո՛վ իսրայէլացիներ, Աստուած Յիսուս Նազովրեցուն աշխարհ ուղարկեց, նա եկաւ և ձեր մէջ հրաշքներ գործեց։ Թէև դուք նրան խաչեցիք, բայց Աստուած երեք օրից ետ յարութիւն տուաւ»։

Երբ այս քարոզը լսեց ժողովուրդը, զղջաց։ Շատերը գալիս էին Պետրոսի, միւս առաքեալների մօտ և հարցնում էին. «Ի՞նչ անենք»։ Պետրոսն էլ ասում էր նրանց. «Ապաշխարեցէ՛ք և մկրտուեցէ՛ք Յիսուս Քրիստոսի անունով»։ Ո՛վ կմկրտուի, Սուրբ Հոգու շնորհը կընդունի»։ Այն օրը երեք հազար մարդ հաւատաց Պետրոսի խօսքերին և մկրտուեց։

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատկից 50 օր ետոյ։

Հայ գրքի պատմ. 3058

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ, ԿՐՕՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ, ԴԱՍԱԳԻՐԵՐԸ.

I.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ

	Ռ.	Կ.
1. ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ հին-ուխտ հատոր Ա.	1	75
2. ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ նոր-ուխտ „ Բ.	2	5
3. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ հայ կրօնուսոյցներին.	—	10

ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ

4. ՈՒՍՈՒՑՈՒԱՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿ. ԿՐՕՆԻ հատ. Դ. .	1	50
5. ՈՒՍՈՒՑՈՒԱՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿ. ԿՐՕՆԻ „ Ե. .	—	50
6. ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ	—	50

II.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7. ԴԱՍԱՏԵՍՊ ԿՐՕՆԻ. . . . . Ա. տարի	—	25
8. ԴԱՍԱՏԵՍՊ » . . . . . Բ. »	—	20
9. ԴԱՍԱՏԵՍՊ » . . . . . Գ. »	—	30
10. ՍՐԲԱԶ. ՊԱՏՄ. հին ուխտի 1. (ընդարձակ) } Դ. »	—	45
11. ՍՐԲԱԶ. ՊԱՏՄ. հին ուխտի 2. (համառօտ) }	—	35
12. ՍՐԲԱԶ. ՊԱՏՄ. նոր ուխտի. 1. (Աւետարան) } Ե. »	—	40
13. ՍՐԲԱԶ. ՊԱՏՄ. նոր ուխտի. 2. (Գործք առաք.) }	—	40

Իմ դասագրքերն ստանալ ցանկացողները կարող են դիմել —

1. Тифлисъ: Священнику С. Саакянцъ. Коммерческое училище.
2. „ Центральная книжная торговля.

Ինձ դիմողներն ստանում են ուսուցչաց դասագրքերի համար 35%, իսկ աշակերտաց՝ 20% (ատաջին տարին 25%) զեղջ կանխիկ վճարմամբ։

ԳԻՆՆ Է 25 կոպ.

409

2013

00268174 409